ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz

Co-financed by
Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

Անձնական տվյալների պաշտպանությունը Հայաստանում

Շուշան Դոյդոյան, բգթ
Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ նախագահ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2020-2021 թթ. գլոբալ միտումները, GDPR

- **Ամազոն (16.07.2021թ.)–€746միլիոն, Լյուքսեմբուրգ**
- **Գուգլ – €50 միլիոն, Ֆրանսիա**
- **H&M - €35.25 միլիոն, Գերմանիա**
- **Թիմ (Իտալիայի հեռահաղորդ.) - €27.8 միլիոն**
- **Բրիթիշ էյրվեյս – €22.4 միլիոն ՄԲ**
- **Մարիոթ - €20.45 միլիոն ՄԲ**
- **Carrefour, Քարֆուր – €2.25 միլիոն, Ֆրանսիա**

https://www.enforcementtracker.com/

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ինչու՞ է կարևոր անձնական տվյալների պաշտպանությունը

- **Անվտանգություն**
- **Ապահովություն**
- **Մարդու իրավունքների պաշտպանություն**
- **Կառույցի հեղինակություն**
- **Չարաշահումների կանխարգելում**

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՏՊ օրենսդրությունը

ՀՀ Սահմանադրություն, **հոդված 34**

1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:

2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՏՊ օրենսդրությունը

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

4. Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով.....:

5. Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՏՊ օրենսդրությունը

Անձնական տվյալների պաշտպանության մասին օրենք

ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 1-ից

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՏՊ հիմնական հասկացությունները

- Անձնական տվյալ,
- Անձնական տվյալների սուբյեկտ,
- Անձնական տվյալներ մշակող,
- Անձնական տվյալների մշակում:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալների սուբյեկտ

Այն ֆիզիկական անձն է, ում վերաբերում են անձնական տվյալները:

Ի՞նչպիսի անձնական տվյալներ են մշակում ՏԻՄերը:

- Քաղաքացիներ (օր. կենսաթոշակառու, ուսանող, բիզնեսմեն, օտարերկրացի և այլն)
- ՏԻՄ աշխատակիցներ (աշխատանքային հարաբերությունների շրջանակում)

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալ մշակող

- պետական կառավարման մարմիններ,
- տեղական ինքնակառավարման մարմիններ,
- պետական կամ համայնքային հիմնարկներ կամ կազմակերպություններ,
- իրավաբանական անձինք,
- ֆիզիկական անձինք,

ովքեր կազմակերպում և (կամ) իրականացնում են անձնական տվյալների մշակում:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալների մշակում

- հավաքել
- Ամրագրել,
- Մուտքագրել,
- Համակարգել,
- Պահպանել,
- Օգտագործել,
- Փոխել,
- Վերականգնել,
- Փոխանցել,
- Ուղղել,
- ոչնչացնել
- կամ այլ գործողություններ (գրեթե ցանկացած գործողություն)

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալ

Ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը (ճանաչել մարդուն):

- Դիտավորյալ այսքան ընդարձակ է սահմանումը:
- Վերաբերում է միայն ֆիզիկական, ոչ իրավաբանական անձանց:
- Տվյալները կարող են լինել ֆիզիկական և էլեկտրոնային կրիչներով (տվյալների բազա, համակարգեր և այլն)

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալների տեսակները

- անձնական կյանքի տվյալներ,
- կենսաչափական անձնական տվյալներ,
- հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ,
- հանրամատչելի անձնական տվյալներ:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական կյանքի տվյալներ

Անձի անձնական կյանքի, ընտանեկան կյանքի, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, մտավոր, սոցիալական վիճակի վերաբերյալ կամ նման այլ տեղեկություններ:

Օրինակ, ՏԻՄ անձնակազմի HR փաստաթղթերը, բնակչության ռեեստրուում քաղաքացիների մասին տվյալները, էլեկտրոնային նամակները, իմեյլները, անուն ազգանունները, հասցեները և այլն:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենսաչափական անձնական տվյալներ

Անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկություններ:

Այս տվյալները բացառիկ են եւ մշտական յուրաքանչյուր անձի համար: Սրանք անսխալ նույնականացման հնարավորություն են տալիս:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱՇԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ

- ռասսայական,
- ազգային պատկանելությանը,
- էթնիկ ծագմանը,
- քաղաքական հայացքներին,
- կրոնական համոզմունքներին,
- արհեստակցական միությանն անդամակցությանը,
- առողջական վիճակին (ֆիզիկական և մտավոր)
- սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հատուկ կատեգորիայի տվյալներ

Ռասսա ազգային պատկանելություն

Քաղաքական հայացքներ

Կրոնական հայացքներ

Արհմիություններին անդամակցելը

Ֆիզիկական կամ մտավոր վիճակը

Սեռական կյանքը կամ կողմնորոշումը

Գենետիկ տվյալներ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հանրամատչելի անձնական տվյալներ

Տեղեկություններ, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ իր անձնական տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ (օր. մասնավոր հայտարարություններ, եկամուտների հայտարարագրեր, անձի անունը, ազգանունը, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, վայրը, մահվան վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը):

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալների մշակման սկզբունքները

1. Օրինականության սկզբունք - անձնական տվյալները մշակվում են օրինական եւ որոշակի նպատակներով
2. Արդար եւ համաչափ մշակում
3. Բացահայտման արգելք
4. Ապահով եւ անվտանգ մշակում
5. Ճշգրիտ եւ թարմացված տվյալներ
6. Առնչվող եւ ոչ ավելորդ տվյալներ
7. Պահպանման ժամկետ
8. Տեղեկություն ստանալու իրավունքի ապահովում

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Օրինականության սկզբունք

ՏԻՄ-երի կողմից անձնական տվյալները մշակվում են.

– **օրենքով ուղղակիորեն սահմանված դեպքերում՝ օրենքով իրենց տրված լիազորությունների շրջանակում,** և

–**օրենքի պահանջների պահպանմամբ**:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Օրինականության սկզբունք

Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ ՏԻՄ-ը իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով:
Այսպիսով, ՏԻՄ-երի կողմից անձնական տվյալների մշակումը հնարավոր է բացառապես օրենքով սահմանված նպատակով և նախատեսված դեպքերում: Անձնական տվյալների մշակումն ու մշակման պայմանները նույնպես նախատեսվում են օրենքով:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Օրինականության սկզբունք

1. Անձնական տվյալները մշակվում են **օրինական, բացահայտ և որոշակի նպատակներով** և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

2. Անձնական տվյալները կարող են մշակվել միայն այն նպատակով, որը սահմանվել էր մինչ տվյալների հավաքագրումը:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալներն օրինական մշակելու հիմքերը

-**Օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը,**

- **Անձի համաձայնությունը,** (երբ անհրաժեշտ է, որ ՏԻՄ-ն անձնական տվյալը մշակի համաձայնության հիման վրա, այդ հնարավորությունը նույնպես պետք է նախատեսված լինի օրենքով):

-**Հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված լինելը:**

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Համաձայնության չափանիշները

1. «ցանկացած կամահայտնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը»
2. «ազատ տրված»
3. «միանշանակ»
4. «տեղեկացված»

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Համաչափության սկզբունք

1. **Տվյալները նվազագույն ծավալով մշակելու սկզբունք** - Պետք է մշակել միայն տվյալների մշակման նպատակի համար անհրաժեշտ անձնական տվյալներ: Կարող են մշակվել միայն այն անձնական տվյալները, որոնք մշակման նպատակի տեսանկյունից **համարժեք են, տեղին եւ անհրաժեշտ**:

Պետք է մշակել միայն այն տվյալները, որոնք անհրաժեշտ են, եւ առանց որոնց անհնար կլինի հասնել սահմանված նպատակին:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Համաչափության սկզբունք

2. **Տվյալները սահմանափակ ժամանակով պահպանելու սկզբունք**
- Տվյալները պետք է պահպանվեն ոչ ավելի, քան տվյալների մշակմամբ հետապնդվող նպատակի իրականացման համար անհրաժեշտ ժամկետը:

Անձնական տվյալները պետք է պահպանվեն այնպես, որ բացառվի տվյալների սուբյեկտի հետ դրանց նույնականացումն ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է դրանց նախօրոք որոշված նպատակին հասնելու համար: Տվյալները պետք է ոչնչացվեն նպատակին հասնելուն պես:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Համաչափության սկզբունք

3. Արգելվում է անձնական տվյալների մշակումը, եթե տվյալները մշակելու նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված կերպով:

Եթե նպատակը թույլ է տալիս, պետք է օգտագործվեն անանուն կամ վիճակագրական տվյալներ, այսինքն ապանձնավորված տվյալներ:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հավաստիության սկզբունք

Մշակվող անձնական տվյալները պետք է լինեն ամբողջական, ճշգրիտ եւ հնարավորինս թարմացված:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱՇԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալներ մշակողի պարտականությունները (գլուխ 5)

- Մշակողը պարտավոր է ոչնչացնել կամ ուղեփակել անձնական այն տվյալները, որոնք անհրաժեշտ չեն օրինական նպատակին հասնելու համար:

- Մշակողը պարտավոր է անձին տրամադրել **անվճար** և **ամբողջական** տեղեկատվություն տվյալների սուբյեկտին (5-օրյա ժամկետում):

- Եթե տվյալների սուբյեկտի անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են, ապա հայտնաբերվելու կամ տվյալների սուբյեկտի կողմից դիմում ստանալուց հետո մշակողը պարտավոր է անհապաղ կամ նման հնարավորության բացակայության դեպքում ***երեք*** աշխատանքային օրվա ընթացքում դրանք ամբողջացնել, թարմացնել, ուղղել կամ ոչնչացնել:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալներ մշակողի պարտականությունները

- Մշակողը պարտավոր է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի գրավոր հարցման հիման վրա նրա գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրել հարցումն ստանալու օրվանից 5 օրվա ընթացքում:
- Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն ներկայացնել պարտադիր ծանուցում այն դեպքում, երբ մտադիր է մշակել կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ:
- Տվյալների սուբյեկտի կամ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի հարցման հիման վրա անձնական տվյալների հավաստիությունը կամ մշակելու օրինականությունը վիճարկվելու դեպքում մշակողը պարտավոր է ուղեփակել տվյալների սուբյեկտին վերաբերող անձնական տվյալները՝ սկսած հարցումն ստանալու պահից մինչև ստուգման գործողությունների ավարտը:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալներ մշակողի պարտականությունները

- Անձնական տվյալների ոչ ճշգրիտ լինելը հաստատվելու դեպքում մշակողը պարտավոր է տվյալների սուբյեկտի կամ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ներկայացրած փաստաթղթերի կամ այլ անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա ուղղել անձնական տվյալները և վերացնել դրանց ուղեփակումը:
- Անձնական տվյալների հետ իրականացվող անօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում մշակողը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թույլ տված խախտումները: Խախտումները վերացնելու անհնարինության դեպքում մշակողը պարտավոր է անհապաղ ոչնչացնել անձնական տվյալները:
- Մշակողը պարտավոր է ապահովել անձնական տվյալների պատշաճ պաշտպանության համակարգերի առկայություն:
- Անձնական տվյալները մշակելու նպատակին հասնելու դեպքում մշակողը պարտավոր է անհապաղ դադարեցնել տվյալներ մշակելը:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալներ մշակողի պարտականությունները

- Անձնական տվյալներ մշակող իրավաբանական անձինք իրենց տիրապետման տակ գտնվող անձնական տվյալներ մշակող էլեկտրոնային համակարգերը բավարար պաշտպանության մակարդակ ունեցող ճանաչելու և ռեեստրում ընդգրկելու նպատակով կարող են դիմել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին:

- Մշակողները կարող են աշխատանքային պայմանագրերում կարգավորիչ նորմեր սահմանել տեսախցիկներով նկարահանման իրականացման վերաբերյալ, ինչպես նաեւ անձնական տվյալների մշակման կարգավորումների վերաբերյալ:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Քննարկենք մի քանի հարց

- Քաղաքացին դիմել է ձեզ իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Ինչպե՞ս եք պատասխանում:
- Գիտե՞ք ինչպես գտնել անհրաժեշտ տվյալը:
- Կարո՞ղ եք ոչ ճշգրիտ տվյալն ուղղել այնպես, որ ողջ համակարգում այն ուղղվի, կամ ոչնչացնել, կամ ուղեփակել: Ունե՞ք մշակված կարգեր:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անվտանգության ապահովման հարցում մշակողի պարտականությունները

- Մշակողը պարտավոր է օգտագործել գաղտնագրման միջոցներ՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական համակարգերի պաշտպանվածությունը պատահական կորստից, տեղեկատվական համակարգեր անօրինական մուտք գործելուց, անձնական տվյալների անօրինական օգտագործումից, ձայնագրումից, ոչնչացումից, վերափոխումից, կրկնօրինակումից, տարածումից և այլ միջամտությունից ապահովելու համար:

- Մշակողը պարտավոր է կանխել անձնական տվյալների մշակման համապատասխան տեխնոլոգիաների մատչելիությունը դրա իրավունքը չունեցող անձանց համար:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անվտանգության ապահովման հարցում մշակողի պարտականությունները

- Անձնական տվյալների հետ իրականացվող անօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում մշակողը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թույլ տված խախտումները: Խախտումները վերացնելու անհնարինության դեպքում մշակողը պարտավոր է անհապաղ ոչնչացնել անձնական տվյալները:

- Էլեկտրոնային համակարգերից անձնական տվյալների արտահոսքի դեպքում մշակողը պարտավոր է այդ մասին անհապաղ հրապարակել հայտարարություն՝ միաժամանակ արտահոսքի վերաբերյալ հայտնելով ՀՀ ոստիկանությանը և անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱՇԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տվյալների սուբյեկտի իրավունքները (գլուխ 4)

- **Տեղյակ լինելու իրավունք.** անձն ունի իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ տեղյակ լինելու իրավունք:
- **Տեղեկություն ստանալու իրավունք.** Անձն իրավունք ունի ստանալ հստակ, մատչելի, ճշգրիտ տեղեկատվություն այն մասին, թե ինչպես են իր տվյալները մշակվում, ինչ նպատակով ու ծավալով:
- **Մոռացված լինելու իրավունք.** Սա ներառում է տվյալների սուբյեկտի՝ իր անձնական տվյալները ջնջելու իրավունքը:
- **Ուղղելու, փոփոխելու իրավունք.** Անձն իրավունք ունի պահանջել ուղղել, փոփոխել իր անձնական տվյալները, եթե դրանք ոչ ճշրգիտ կամ ոչ ամբողջական են:
- **Առարկելու իրավունք.** Տվյալների սուբյեկտն ունի իր տվյալների մշակմանն առարկելու իրավունք:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տվյալների սուբյեկտի իրավունքները

Անձն ունի տեղեկատվություն ստանալու իրավունք: Անձն իրավունք ունի.

-ստանալ տեղեկություններ իր անձնական տվյալները մշակելու փաստի և նպատակների մասին,
-անձնական տվյալները մշակելու եղանակների վերաբերյալ,
-տվյալները մշակողի, նրա գտնվելու վայրի մասին,
-տվյալների ցանկի և աղբյուրների մասին,
-անձնական տվյալները մշակելու ժամկետների մասին,
-ինչպես նաև այն անձանց շրջանակի մասին, որոնց կարող են փոխանցվել կամ տրամադրվել անձնական տվյալները,
- տվյալները մշակելու հետևանքով տվյալների սուբյեկտի համար առաջացող հնարավոր իրավական հետևանքների վերաբերյալ:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տվյալների սուբյեկտի իրավունքները

Անձն ունի տեղեկատվություն ստանալու իրավունք։

➢Անձն իրավունք ունի ստանալ մշակվող անձնական տվյալների պատճենները (ինչպես ֆիզիկական այնպես էլ էլեկտրոնային եղանակով)

➢Տեղեկությունները անձին տրամադրվում են ***5-օրյա ժամկետում, անվճար եւ ամբողջական***՝ անկախ դրանց մշակման ժամանակից՝ գրավոր կամ էլեկտրոնային հարցման հիման վրա։

Այսպիսով, անձնական տվյալների մշակումը պետք է լինի թափանցիկ գործընթաց։ Այս պահանջի նպատակն է խուսափել գաղտնի կամ ծածուկ մշակումից։

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տվյալների սուբյեկտի իրավունքները

Այսպիսով,

Տրամադրված տեղեկատվությունը պետք է լինի.
-Սպառիչ և ամբողջական,
- Մատչելի և հասկանալի
- Գրված պարզ լեզվով,
- Բաց ձեւաչափով և մեքենայաընթեռնելի (ոչ փակ պդֆ)
- Անվճար:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տվյալների սուբյեկտի իրավունքները

Անձն ունի իր մասին սխալ, ոչ ճշգրիտ տեղեկության ճշգրտման իրավունք

Գրավոր դիմումի հիման վրա, անձնական տվյալը պետք է.

- ✓ ճշգրտվի, ուղղվի, եթե սխալ է, ոչ ճշգրիտ կամ հնացած, կամ
- ✓ ոչնչացվի, եթե անհամատեղելի է նպատակի հետ,
- ✓ 3 օրյա ժամկետ,
- ✓ անվճար:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տվյալների սուբյեկտի իրավունքները

Տվյալների սուբյեկտն իրավունք ունի մշակողից պահանջել ուղեփակել կամ ոչնչացնել իր անձնական տվյալները, եթե անձնական տվյալներն ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար:

Անձնական տվյալների ուղեփակում՝ անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ համակարգելու կամ փոխանցելու կամ օգտագործելու հնարավորության ժամանակավոր կասեցում:

Անձնական տվյալների ոչնչացում՝ գործողություն, որի արդյունքում հնարավոր չէ վերականգնել տեղեկատվական համակարգում առկա անձնական տվյալների բովանդակությունը:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տվյալների սուբյեկտի իրավունքները

- Եթե տվյալների սուբյեկտը համարում է, որ իր անձնական տվյալների մշակումն իրականացվում է օրենքի պահանջների խախտմամբ կամ խախտում է իր իրավունքներն ու ազատությունները, ապա նա իրավունք ունի մշակողի գործողությունները կամ անգործությունը բողոքարկել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին կամ դատական կարգով:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՏՊ պատասխանատու անձ

Յուրաքանչյուր ՏԻՄ մարմնում պետք է նշանակվի Անձնական տվյալների պաշտպանության համար պատասխանատու պաշտոնատար անձ:

Անձնական տվյալների պաշտպանության համար պատասխանատու պաշտոնատար անձը.

- ապահովում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով սահմանված՝ անձնական տվյալներ մշակողի պարտականությունների կատարումը,
- ապահովում է պետական մարմնի կապն անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի հետ, այդ թվում՝ կազմակերպում անձնական տվյալների մշակման վերաբերյալ խորհրդատվության ստացումը,

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՏՊ պատասխանատու անձ

- կազմում եւ անձնական տվյալների պաշտպանության գործակալության ղեկավարին է ներկայացնում անձնական տվյալների պաշտպանության վերապատրաստման՝ ՏԻՄ ներկայացուցիչների ցուցակը,
- ապահովում է անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ քաղաքացիների հարցումների եւ այլ գրությունների պատասխանները, անհրաժեշտության դեպքում դրանք ներկայացնում անձնական տվյալների պաշտպանության գործակալության կարծիքին,
- իրականացնում է մարմնի կողմից անձնական տվյալների մշակմանը վերաբերող այլ անհրաժեշտ միջոցառումներ:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՏՊ պատասխանատու անձ

- Անձնական տվյալների պաշտպանության համար պատասխանատու պաշտոնատար անձի հետ կապ հաստատելու տվյալները (էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը) տեղադրվում են տվյալ ՏԻՄ պաշտոնական կայքում:

- Անձնական տվյալների պաշտպանության համար պատասխանատու պաշտոնատար անձ չնշանակելու դեպքում անձնական տվյալների պաշտպանության համար պատասխանատու է ՏԻՄ ղեկավարը կամ գլխավոր քարտուղարը՝ կախված տվյալների մշակման դեպքից:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գործնական հարցադրումներ

- Արդյո՞ք մարդիկ տեղյակ են, որ իրենց մասին անձնական տվյալ եք մշակում:
- Արդյո՞ք նրանք տեղյակ են, թե ինչ անձնական տվյալներ եք մշակում
- Արդյո՞ք փաստաթերն այնպես են պահպանվում, որպեսզի չառնչվող անձնակազմի/անձանց մուտքը բացառվի:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը

Անձնական տվյալների պաշտպանությունն իրականացնում է պետական լիազոր մարմինը՝ ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գործակալության անձնակազմը

Գործակալությունն ունի 8 հաստիքային աշխատակից՝ ներառյալ գործակալության պետը եւ 1 փորձագետ



ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՏՊԳ

ԱՏՊԳ-ն իր լիազորություններն իրականացնում է 2 եղանակով

-Անձի դիմումի հիման վրա

Եթե տվյալների սուբյեկտը համարում է, որ իր անձնական տվյալների մշակումն իրականացվում է օրենքի պահանջների խախտմամբ, ապա նա իրավունք ունի մշակողի գործողությունները կամ անգործությունը կամ որոշումները բողոքարկելու անձնականտվյալների պաշտպանության լիազոր մարմին: (Հոդված 17)

-Իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա ստուգում է անձնական տվյլաների մշակման համապատասխանությունը օրենքի պահանջներին (Հոդված 24, կետ3).

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վարույթների թիվը 2015-2021թ.

Դիմումի հիման վրա հարուցված վարույթներ- 67

Գործակալության նախաձեռնությամբ հարուցված վարույթներ – 163

2015-ին՝ 2 վարույթ,
2016-ին՝ 11 վարույթ,
2017-ին՝ 21 վարույթ,
2018-ին՝ 33 վարույթ,
2019-ին՝ 83 վարույթ,
2020-ին՝ 80 վարույթ:

Ընդհանուր՝ 230 վարույթ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գործակալության գործառույթները (խախտումների բացահայտում)

ստուգում է իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա անձնական տվյալների մշակման համապատասխանությունը օրենքի պահանջներին

օրենքի պահանջների խախտման դեպքում կիրառում է օրենքով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ

պահանջում է արգելափակել, կասեցնել կամ դադարեցնել օրենքի պահանջները խախտող անձնական տվյալների մշակումը. պահանջում է անձնական տվյալների ուղղում, փոփոխում, ուղեփակում կամ ոչնչացում

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գործակալության գործառույթները (խախտումների բացահայտում)

անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ մշակողի ծանուցման ուսումնասիրության արդյունքում ամբողջությամբ կամ մասամբ արգելում է անձնական տվյալների մշակումը

ապահովում է տվյալների սուբյեկտի իրավունքների պաշտպանությունը

քննում է անձնական տվյալների մշակմանը վերաբերող հարցերով ֆիզիկական անձանց դիմումները և իր լիազորությունների սահմաններում ընդունում որոշումներ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գործակալության գործառույթները (ռեեստրի վարում եւ մոնիթորինգ)

- վարում է անձնական տվյալներ մշակողների ռեեստր
- իրավաբանական անձանց անձնական տվյալներ մշակող էլեկտրոնային համակարգերը ճանաչում է բավարար պաշտպանության մակարդակ ունեցող և դրանք ներառում է ռեեստրում
- ստուգում է տվյալներ մշակելու համար օգտագործվող սարքերը և փաստաթղթերը, այդ թվում՝ առկա տվյալները և համակարգչային ծրագրերը
- կատարում է հետազոտություններ, տալիս է անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն կամ տեղեկացնում է անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գործակալության գործառույթները (այլ լիազորություններ)

- օրենքով նախատեսված դեպքերում դիմում է դատարան
- տարեկան մեկ անգամ ներկայացնում է հրապարակային հաշվետվություն՝ անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակի և նախորդ տարվա գործունեության վերաբերյալ
- իրավապահ մարմիններին հաղորդում է ներկայացնում իր գործունեության ընթացքում քրեաիրավական բնույթի խախտումների վերաբերյալ կասկածներ ի հայտ գալու դեպքում
- պահպանում է իր գործունեության ընթացքում իրեն վստահված կամ հայտնի դարձած անձնական տվյալների գաղտնիությունը և իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Պատասխանատվություն ԱՏՊ կարգը խախտելու համար

Հոդված 189.17

1. Անձնական տվյալների հավաքման կամ ձայնագրման կամ մուտքագրման կամ համակարգման կամ կազմակերպման կամ ուղղման կամ պահպանման կամ օգտագործման կամ վերափոխման կամ վերականգնման կամ փոխանցման օրենքով սահմանված կարգը խախտելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

2. Անձնական տվյալները ոչնչացնելու կամ ուղեփակելու օրենքով սահմանված կարգը խախտելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

ՈՐՄԱՅԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Պատասխանատվություն ԱՏՊ կարգը խախտելու համար

Հոդված 189.17

3. Անձնական տվյալներ հավաքելու ընթացքում անձնական տվյալների սուբյեկտի պահանջով մշակողի կողմից օրենքով նախատեսված տեղեկատվություն չտրամադրելը կամ տրամադրման կարգը խախտելը կամ չտրամադրելու պատճառներն ու հետևանքները չպարզաբանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

4. Անձնական տվյալներ մշակողի կողմից անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին չծանուցելը կամ ծանուցման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինսապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Պատասխանատվություն ԱՏՊ կարգը խախտելու համար

5. Անձնական տվյալները մշակելու ընթացքում գաղտնագրման միջոցներ չօգտագործելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

6. Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները, կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները խախտելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

ՈՐՄԱՑԻԱՅԻ ՏՈՒԹՅԱՆ ՏՐՈՆ

Պատասխանատվություն ԱՏՊ կարգը խախտելու համար

7. Անձնական տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում կամ դրա ավարտից հետո անձնական տվյալներ մշակողների կամ օրենքով նախատեսված այլ անձանց կողմից անձնական տվյալների գաղտնիությունը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

8. Սույն հոդվածով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե լիազոր մարմնի որոշմամբ սահմանված ժամկետում կամ մինչև վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը **վերացրել է իր թույլ տված խախտումը և լիազոր մարմին է ներկայացրել ապացույցներ այդ մասին:**

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վարույթների օրինակներ
(Բժշկական անձնական տվյալների մատչելիությունը)

Բժշկական հաստատությունների թույլ տված խախտումները

• սահմանված չէր օրինական նպատակ
• ստացած չէր պացիենտների համաձայնությունը
• առկա չէր անձնական տվյալների մշակման, այդ թվում՝ պահպանման կարգ

Արդյունքը

• վերացվել է անձնական տվյալների մշակման խախտումը
• բժշկական անձնական տվյալների՝ օրենքով չսահմանված փոխանցում չի կատարվում

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վարույթների օրինակներ
(Տեսահսկումը դպրոցներում)

16 դպրոցների թույլ տված խախտումները
• սահմանված չէր օրինական նպատակ
• ապահովված չէր համաչափության սկզբունքը
• չէր իրականացվել պատշաճ ծանուցում (առկա չէին տեսահսկման ցուցանակներ)

Արդյունքը
• սահմանվել է օրինական նպատակ
• տեսահսկումը համապատասխանեցվել է օրենքին կամ դադարեցվել
• ստացվել է համաձայնություն եւ տեղադրվել են տեսահսկման մասին իրազեկվող ցուցանակներ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վարույթների օրինակներ
(Տեսահսկումը ավտոկայանատեղերում)

Քաղաքապետարանի (Փարքինգ Սիթի Սերվիս ՓԲԸ-ի) թույլ տված խախտումները

• ապահովված չէր համաչափության սկզբունքը

Արդյունքը

• տեսագրությունների որակը փոքրացնելու միջոցով ապահովվել է համաչափության սկզբունքը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վարույթների օրինակներ
(Սոցիալական գրառումներ)

Քաղաքապետարաններից մեկը հրապարակում էր արել ֆեյսբուքում՝ հակադարձելով բնակիչներից մեկին, թե իրեն տուն չեն հատկացրել:
• ապահովված չէր օրինականության սկզբունքը

Արդյունքը
• Անձնական տվյալները հեռացվեցին քաղ. շին կոմիտեի պաշտոնական կայքից:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վարույթների օրինակներ
(Պարգևավճարների մասին տեղեկատվության մատչելիություն)

Իրականացվեց քաղաքապետարանի գործողության իրավաչափության գնահատում: Քաղաքապետարանը մերժել էր տրամադրել տեղեկատվությունը:

Արդյունքը

- Վարույթի արդյունքում որոշվեց, որ անձնական տվյալն ինքնին գաղտնիք չէ,
- Հրապարակվեցին այն կարգադրություններն ու որոշումները, որոնց հիման վրա տրվել էին պարգեւավճարները ՏԻՄ աշխատակիցներին:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Օգտակար հղումներ

- **<u>Անչափահասների</u> անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները** սահմանվում են ՀՀ ԱՆ ԱՏՊ գործակալության ուղեցույցում՝ https://www.unicef.org/armenia/media/2761/file

- **<u>ՏԻՄ</u> աշխատակիցների անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները** աշխատանքային հարաբերությունների շրջանակում սահմանված են ՀՀ ԱՆ ԱՏՊ գործակալության ուղեցույցում: https://www.moj.am/storage/uploads/002employee_guide-10.04.2017.pdf?fbclid=IwAR0nYqvimrSvbg47WwJez3Rpz9bD9xxPtRVmK7tsqfdX07sEiNk6UEMn5S8

- **<u>Տեսահսկում</u> -** ՏԻՄ վարչական շենքում տեսահսկում իրականացնելու կանոններն ու ընթացակարգերը սահմանվում են ԱՏՊ գործակալության տեսահսկման ուղեցույցում՝ https://www.moj.am/storage/uploads/001Video_surveillance_guide.pdf?fbclid=IwAR0OmrghQqWfGuBP4YGtsVhz8cangIdMcrxOmTfZ0X9EDfRtVjlIxyN1_SQ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz

Co-financed by
Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

www.foi.am
www.givemeinfo.am

+374 91 407 836
+374 94 700 974

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ